ՔՐԻՍՏԻՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ
ՀԱԻ

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԾԵՍԸ ԺԹ. ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ Ի. ԴԱՐԱՍԿԶԲԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

Մկրտությունը խորհուրդ է, որով քրիստոնյան Հիսուս Քրիստոսի հետ մեռնում է եւ նոր կյանքով հարություն առնում[1]: Ծիսական այս լվացումը խորհրդանշում է մարդու երկրորդ ծնունդը[2]: Դրանով է պայմանավորված մկրտության ավազանի ընկալումը միաժամանակ իբրեւ գերեզմանափոս եւ մայրական արգանդ[3]:

Մկրտությունը մեղսաքավիչ նշանակություն ունի[4]: Ահա թե ինչու քրիստոնյաների սովորությունն էր մկրտությունից հետո ճերմակ զգեստ հագնել՝ «ի նշան մաքրութեան հոգւոյ»[5]: Ըստ Ագաթանգեղոսի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից Եփրատ գետում մկրտվածները եւս սպիտակ զգեստներ են հագնում. «Եւ անտի ելեալ մեծաւ ցնծութեամբ եւ սպիտակազգեստ հանդերձիւք... լուսաւորեալք եւ հրեշտակացեալք»[6]:

Ժողովրդական խոսքում առավել կիրառական է այս ծեսի «կնունք» անվանումը, մինչդեռ եկեղեցական լեզվում՝ մկրտությունը: Այն կնունք է անվանվում ծիսական լվացումից հետո կատարվող դրոշմի խորհրդակատարության շնորհիվ, որի ժամանակ մարմնի ինը մասերն օծվում են մյուռոնով: Սրբազան այս յուղը «նյութական միջնորդ է՝ ի զորու աստ-

---

[1] Տես Հռոմեացիներ Զ. 3-11. **Ա. եպս. Ժամկոչյան**, Գ. սրկ. Ղուշչյան, Մկրտություն. «Տարեգիրք», Աստվածաբանության ֆակուլտետ, 2007, Բ., էջ 28-45:

[2] Տես **С. Аверинцев,** Вода. «Мифы народов мира», т. 1, Москва, 1987, с. 240:

[3] Տես **М. Элиаде,** Тайные общества. Обряды инициации и посвящения, Москва, 2002, с. 301:

[4] Արիոսականների աղանդին հարած Վաղես կայսերը Ս. Ներսես Մեծը հորդորում է. «Մկրտեաց դու ի սոյն յայս խորհուրդս սքանչելի կենաց թողութեան եւ նորոգութեան. զմանուկն քո այսմ սրբութեանն երանութեան լուսոյ թողութեան մկրտութեանն արժանի արասցուք» («Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Երեւան, 1987, էջ 128):

[5] «Պատմութիւն հին հայ տարազին», յօրինեց **Վ. վ. Հացունի,** Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 295:

[6] «**Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց», Երեւան, 1983, էջ 464:

վածային հոգին ու շնորհը ներգործական դարձնելու մարդկանց եւ իրերի վրա»[7]: Այն ունի նաեւ նվիրագործող (ինիցիացիոն) նշանակություն[8]:

Հոդվածի նպատակն է վեր հանել ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին հայ բանահյուսության եւ ազգագրության մեջ արտացոլված մկրտության ծեսը եւ դրա ժողովրդական իմաստաբանական ընկալումները:

Հայոց մեջ կնունքը կազմում էր տղաբերքի[9] քառասնօրյա ողջ ծիսաշարային համալիրի անքակտելի մասը: Սովորաբար նորածին երեխաներին ութ օրականում մկրտում էին[10]: Մկրտությունն ու քառասունքը երեխայի հասարակական ճանաչման խորհուրդն ունեին[11]: «Էրեխայ բերես՝ չկնքած մեռնի» անեծքով[12] երեւան է գալիս ժողովրդի կողմից մկրտությանը տրվող կարեւորությունը[13]:

Գորիսի Տեղ գյուղի, ներկայումս Տավուշի մարզի Լուսաձոր գյուղի բնակչուհի Սոնիկ Զեյնալյանը մեզ պատմեց, որ իր նորածին եղբոր մահից հետո տատը երազում տեսել է հանգուցյալ պապին: Վերջինս հարցրել է նրան, թե ինչու նորածնին չեն կնքել, որ եկել է իր մոտ, բայց չի կարողանում բարձրանալ խնկի ծառը[14]: Խնկենին տվյալ դեպքում միջին

---

[7] **Ա. Ժամկոչյան, Ն. Հակոբյան,** Մեռոնամաններ սուրբ Գեւորգի պատկերով. «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Երեւան, 2001, էջ 322:

[8] Անդ:

[9] Տղաբերք – ծննդաբերություն, որդեծնություն:

[10] Հրահանգվում էր ութ օրականում մկրտվել «Առաքելական» ԺԳ. կանոնով («Կանոնագիրք Հայոց», Ա., աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի,** Երեւան, 1964, էջ 35-37), Նեոկեսարիայի ժողովի ԺԶ կանոնով (անդ, էջ 186), ինչպես նաեւ Գեորգ Դ. կաթողիկոսի (1813-1882 թթ.) կոնդակով (**Ն. վրդ. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 526):

[11] Տես **Ռ. Նահապետյան,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երեւան, 2013, էջ 40-41:

[12] «Հայ ժողովրդական ավանդութիւններ», ժողովածու **Տ. Նաւասարդեանց,** գիրք Ա., Թիֆլիս, 1883, էջ 6:

[13] Քրիստոսի Ծննդյան եւ Մկրտության ժողովրդական տոնակատարությունը խափանելու համար բոլշեւիկյան իշխանությունները 1920-1930 թթ. կազմակերպում էին «Կարմիր կնունք» եւ «Կոմսոմոլի ծնունդը» անվանումներով միջոցառումներ: Կարմիր կնունքի ժամանակ ակումբներում, թատրոններում եւ դպրոցներում ընթերցվում էին հակակրոնական բնույթի զեկուցումներ, դասախոսություններ: Այնուհետեւ ինտերնացիոնալի ուղեկցությամբ կատարվում էր երեխաների կարմիր մկրտությունը: Ծնողներն իրենց երեխաներին հանձնում էին միջոցառումների կազմակերպիչներին: Յուրաքանչյուր երեխա ունենում էր իր «կնքահայրը», որի պարտականությունն էր «սանիկին» տալ «հեղափոխական ոգի եւ կոմունիստական առողջ դաստիարակություն»: «Կնքված» երեխաները ստանում էին հեղափոխական գործիչների եւ այլ անուններ (Լենին, Ստալին, Մայիսկա), որոնք արձանագրվում էին հատուկ մատյաններում (**Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, Երեւան, 2016, էջ 164): Խորհրդային տարիներին քիչ չէին նաեւ այն դեպքերը, երբ մարդիկ գաղտնի էին մկրտվում:

[14] **Ք. Այվազյան,** Դաշտային բանահյուսական-ազգագրական նյութեր, Տավուշի մարզ, գ.

եւ վերին աշխարհները միացնող Տիեզերական ծառն է, ինչպես նաեւ դեպի «Աստծո դուռը»՝ վերին աշխարհ տանող կամուրջը[15]*:*

Մկրտության նշանակությունը երեւում է նաեւ հայկական ժողովրդական հեքիաթներում: Դղմաշենից գրառված «Հուսեին փայլեւանի ու Սուսամբարի խեչրթը»[16] *հեքիաթում որոշում են երեխային կնքել. «Մա՛րթ, բե մեր Սուսամբարին կնքենք, հո էս էլ սարի գլոխը չի՞, էրեխեն հընչի անկնունք մնա»*[17]*: «Տատ ու պետատ» հեքիաթում*[18] *արտահայտվում է մարդկանց անհանգստությունը երեխայի կնքելու առնչությամբ, եւ հարեւանները որոշում են նախաձեռնել անհայր երեխայի կնունքը. «Անտեր տղա ի, խայ քրիստոնյա ի, չըլնի մեռնի անկնունք»*[19]*: «Կափռել հրեշտակի նաղըլը» հեքիաթում*[20]*, երբ ամուսինը բավական փող է վաստակում, կինն առաջարկում է երեխային կնքել, «յախիցն ա կըպնըմ, թա մեր խոխան օխտը տրեկան ա, համա սուրփ մեռոնով մըկըրտված չի, դե որ էսքան փող ես ախչադել պեր մհիկ կնքենք»*[21]*:*

Հայտնի է, որ հայոց տարբեր ազգագավառներում մկրտությունը կատարում էին երեխայի ծննդյան քառասնօրյա անցումային շրջանում: Վասպուրականում երեխային կնքում էին ծննդից երեք-ութ օր հետո[22]*, Մուշում՝ ծննդյան առաջին շաբաթվա ընթացքում, ոչ ավելի ուշ*[23]*, Նոր Նախիջեւանում՝ երկու-երեք օր հետո*[24]*, Եվդոկիայում եւ Կեսարիայում՝ 8-10 օրականում*[25]*, Արճակում՝ «ութ-տասը օր հետո»*[26]*: Մուսա լեռում*

Լուսաձոր, 2015 թ., տետր 1, թ. 36:

[15] Տես **К. Королев,** Энциклопедия символов, знаков, эмблем, Москва, Санкт-Петербург, 2003, с. 321. **Լ. Սիմոնյան,** Տոմարային ծիսաշար, հ. 1, Տոմար, Նոր տարի, Սուրբ Ծնունդ, Երեւան, 2006, էջ 122, 126:

[16] ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, **Գ. Ստեփանյանի** ֆոնդ, FFXI:3259-3270:

[17] Անդ, FFXI:3263:

[18] Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետեւ՝ ՀԺՀ), հ. XVI, թ. 42, Երեւան, 2009, էջ 269-278:

[19] Անդ, էջ 270:

[20] ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, **Մ. Ավչյանի** ֆոնդ, FFXI:3693-3703:

[21] Անդ, թ. 3694:

[22] Տես **Ե. Լալայեան,** Վասպուրական. ԱՀ, գիրք XX, Թիֆլիս, 1910, էջ 175:

[23] Տես **Ե. Լալայեան,** Մուշ-Տարօն. ԱՀ, գիրք XXVI, Թիֆլիս, 1916, էջ 179:

[24] Տես **Ե. Շահազիզ,** Նոր-Նախիջեւանը եւ Նոր-նախիջեւանցիք. ԱՀ, VII եւ VIII գրքեր, Թիֆլիս, 1901, էջ 98:

[25] Տես «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց», համադրուած **Ար. Ալպոյաճեանէ,** Գահիրէ, 1952, էջ 1514. «Պատմութիւն հայ Կեսարիոյ». Տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն **Ա. Ալպոյաճեանէ,** Գահիրէ, 1937, էջ 1734:

[26] Տես «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն» (այսուհետեւ՝ ՀԱԲ), հ. 8, Արճակ, **Ս.Ավագյան (Սերինե),** Երեւան, 1978, էջ 73:

երեխայի ծննդյան յոթերորդ օրը պատրաստվում էին մկրտությանը: Կնքահոր տանը հյուրընկալվելով՝ որոշում էին կնունքի օրը[27]: Ղարադաղում հայ քրիստոնյան պարտավոր էր «մեռոնել» (մկրտել) երեխային ծնվելու յոթերորդ օրը կամ մինչեւ քառասունքը լրանալը[28]: Հավատալով Աստծո եւ մյուռոնի գերբնական զորությանը՝ Կիլիկիայի հայերը մինչեւ երեխայի քառասունքը մկրտում էին նրան, նամանավանդ եթե երեխան թուլակազմ էր կամ հիվանդ[29]: Բուլանըխում, ընդհակառակը, տկարներին կարող էին չկնքել, իսկ սովորական պայմաններում յոթ օրից ավել երեխային անկնունք չէին թողնում, քանի որ չկնքվածը անսուրբ էր համարվում[30]: Սասունում եւ Ղզլարում նույնպես երեխան համարվում էր անմաքուր, նույնիսկ հայրը նրան չէր մոտենում, գրկում, մինչեւ մկրտվելը[31]: Եվդոկիայում չկնքված երեխային չէին համբուրում՝ համարելով նրան հեթանոս. «Նորածինը հեթանոս կը նկատէին եւ մկրտութենէն առաջ երբէք չէին համբուրէր: Երբ այս արարողութիւնը կատարուի եւ մանուկին զգայարանքները միւռոնով օծուին եւ մարմինը ջուրը խոթուի, մինչեւ ծիսակատար քահանան մանուկին գլուխը ջուր լեցնէ. այն ատեն եւ միայն այն ատեն է որ անոր հոգին կորուստի վտանգէն զերծ կը նկատուի եւ միայն այն ատեն է, որ անոր ազգականներն ու բարեկամները իրենց սէրը կարտահայտեն»[32]:

Առայսօր կենցաղավարում է այն սովորույթը, որ ընտանիքի անդամներից մեկի մահվան դեպքում ընտանիքի մյուս չմկրտված անդամները մկրտվում են[33], որի արձագանքը տեսնում ենք Լոռվա հեքիաթում. «Աշխարհն էլ մասնակցում ա նրա ուրախությանն էլ, տխրությանն էլ, կատարում են թոռի կնունքը, պապի՝ թաղումեքը»[34]:

Սասունում մկրտության ժամանակ մկրտվողին բարեմաղթում էին՝ «Կանչնաս», «տեղդ կանաչի», որ նշանակում էր «սերնդով ապահովես

---

[27] Տես **Գ. Գյոզալյան,** Մուսա լեռան ազգագրությունը, Երեւան, 2001, էջ 172:

[28] Տես **Հ. Հովսեփյան,** Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, Երեւան, 2009, էջ 341:

[29] Տես **Վ. Սվազլյան,** Աստվածաշնչային գաղափարների արտացոլումը կիլիկյան բանահյուսության մեջ. ՊԲՀ, 2004, 3, էջ 52:

[30] Տես **Բենսէ,** Բուլանըխ կամ Հարք գաւառ. «Ազգագրական հանդէս», գիրք Ե., Թիֆլիս, 1899, էջ 126:

[31] Տես **Վ. Պետոյան,** Սասնա ազգագրությունը, Երեւան, 1965, էջ 275. ՀԱԲ, հ. 10, Ղզլար. **Գ. Գեւորգյան,** Երեւան, 1980, էջ 52-53:

[32] «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց», համադրուած **Ար. Ալպոյաճեանէ,** էջ 1514:

[33] **Ք. Այվազյան,** Դաշտային բանահյուսական-ազգագրական նյութեր, ասացող՝ Տ. Վահան քհն. Առաքելյան, Թիֆլիս, 04.04.2010 թ., ասացող՝ Քնարիկ Խաչատրյան, Երեւան, 26.08.2015 թ.:

[34] ՀԺՀ, հ. VIII, (Գուգարք-Լոռի), թ. 98, «Ժուժկալ թագուհին ու իր երեք տղի հեքիաթը», Երեւան, 1977, էջ 593:

օջախդ»[35]: Ժողովուրդը ցայսօր օգտագործում է «Մյուռոնը միշտ կանաչ լինի» օրհնանքը: Կանաչը խորհրդանշում է հարատեւությունն ու մշտադալարությունը: Մյուռոնի գլխավոր բաղադրատարրը՝ ձիթայուղը, կանաչավուն է, որի համար էլ ժողովրդական խոսքում տարածված է «կանաչ մեռոն» արտահայտությունը[36]: Զահարմահալում գործածվում էր «Էն կանանչ մեռոնը» երդման բանաձեւը[37]: Իսկ «Մեռոնի օրհնությունը խիզնիդ[38] յարեւին ըլնի»[39] եւ «Կանանչ մեռոնի շնորհքը տան ու տեղիդ վրա ըլնի»[40] բարեմաղթություններում ընկած է մյուռոնի օրհնությունը ողջ ընտանիքի եւ տան վրա տարածվելու ցանկությունը:

Ղարադաղում մկրտելիս քահանան մյուռոնը քսում էր երեխայի բերանին՝ ասելով՝ «լինես բարեխոս», աչքերին՝ «լինես բարետես», ճակատին՝ «լինես բարի մտածող», ականջներին՝ «լինես բարին լսող», սրտին՝ «լինես բարեսիրտ», ձեռքերին՝ «լինես բարեգործ», ոտքերին՝ «լինես բարեքայլ», պորտին՝ «լինես բարի ծնունդ», թիկունքին՝ «թիկունքդ միշտ ամուր լինի»[41]:

Մկրտությունը, լինելով տղաբերքի քառասնօրյա շրջանի անբաժան մասը, երեխայի ծննդյան հետ միասին անցումային ծես է՝ «անցում մի աշխարհից մյուսը, մի վիճակից՝ մյուսը»[42]: Մկրտությունը, ինչպես ամուսնության ու մահվան պարագաներում է, մարդու կյանքի կարեւոր շրջափուլերից մեկի՝ ծննդյան ժամանակ կատարվող ծիսական լվացումն է[43] եւ ոչ միայն: Նրանով նորածինը կարծես նվիրագործվում է[44]՝ թաղվելով ջրի մեջ եւ հարություն առնելով նոր կարգավիճակով:

Մկրտությունը դարման էր հանդիսանում զանազան հիվանդությունների դեպքում: Ինչպես նշում է պատմահայր Մովսես Խորենացին, Կոստանդիանոս կայսրը բորոտությունից բժշկվում է՝ կենսատու ավազանում

---

[35] **Վ. Պետոյան,** Սասնա ազգագրությունը, էջ 278:

[36] **Զ. վրդ. Բաղումյան,** 200 հարց Ս. Մկրտության մասին, Երեւան, 2016, էջ 246:

[37] **Ա. Երեմեան,** Զահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնը, Վիեննա, 1923, էջ 68:

[38] Խիզան - ընտանիք:

[39] **Ա. Երեմեան,** նշվ. աշխ., էջ 64:

[40] ԷԱԺ, հ. Ա., Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Աղ. Մխիթարեանց, Մոսկուա-Ալէքսանդրապոլ, 1901, էջ 130:

[41] **Հ. Հովսեփյան,** Ղարադաղի հայերը, Ա., Ազգագրություն, էջ 341:

[42] **Գ. Ստեփանյան,** Հայոց տոնական վարքային համակարգը (ըստ ԺԹ. Դարի վերջի եւ Ի. դարի սկզբի ազգագրական նյութերի), թեկն. ատենախոս., Երեւան, 2007, էջ 122:

[43] Տես **Ա. Ստեփանյան,** Ծիսական լվացումները հայոց կենցաղում. «Նոր ազգագրական հանդես», 2005, Ա., էջ 21-27:

[44] Նվիրագործման մասին տես **Г. Левинтон,** Инициация и мифы, «Мифы народов мира», т. 1, Москва, 1987, с. 543-544:

լվացվելով[45]: Մյուռոնին վերագրվել են բազմաթիվ բուժիչ հատկություններ: «Խիղճ-անխիղճ մարդը» հեքիաթում[46] աղջկա հանված աչքերը տեղադրվում են մյուռոնի միջոցով. «Աչքերը հանում, տալիս ա պառավին, պառավը տալիս ա տերտերին, սա լվանում ա մեռոնով, մեռոն ա քսում, դնում տեղը, դառնում ա առաջվա աղջիկը»[47]: Հեքիաթի մյուս տարբերակներում աչքերը աղբյուրի ջրով եւ աղավնիների փետուրով են լվանում[48], ոսկով[49], աղջկա ծիծաղից թափված վարդ ու ռեհանով[50], կամ ուղղակի դրվում են իրենց տեղերը[51]: ԺԹ. դարում ամուլ կանայք փորձում էին ձեռք բերել մկրտության ավազանի ջրից եւ խմել, կամ քահանան մեռոնաջրից կաթեցնում էր չբեր կանանց պարանոցին[52]: Որդեծնության արժանանալու մյուս միջոցներից մեկն էլ նոր մկրտված մանկանը համբուրելն էր[53]: Սասունում կնունքի մյուռոնաջրով, օրհնած եւ մեռոնած ջրերով նաեւ լողացնում էին հիվանդներին կամ ջուրը քսում նրանց մարմնին[54]: Հանդիպում է նաեւ հակառակ իրողությունը, երբ ատամնացավից ազատվելու համար համբուրում էին դեռեւս անկնունք երեխային[55]:

Ծննդկանը մինչեւ երեխայի կնունքը համարվում էր անմաքուր, եւ նրա սպասքը առանձնացվում էր: Հայ ժողովրդական «Խիղճ-անխիղճ մարդը» հեքիաթում[56] ծննդկանը մտահոգվում է «հարամ մնալու» եւ «չհալալվելու» համար. «Աստված ջա՛ն, երեխայիս քառասունքը էսօր-էգուց կթամամի, մենք էլ էսպես հարամ պիտի մնանք»[57]: Արջի կերպա-

---

45 Տես **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1991, էջ 227: Աստվածայինի, գերբնականի, հմայության եւ աղոթքի ազդեցությամբ սովորական ջուրը դառնում է սրբազան եւ բուժիչ (տես В. Тэрнер, Символ и ритуал, Москва, 1983, с. 144):

46 ՀԺՀ, հ. VIII Գուգարք (Լոռի), թ. 112, Երեւան, 1977, էջ 651-669:

47 Անդ, էջ 666:

48 ՀԺՀ, հ. I Այրարատ, թ. 26 «Վարդիթեր», Երեւան, 1959, էջ 355-367. ՀԺՀ, հ. VIII Գուգարք (Լոռի), № 53 «Չար կեսուրը», Երեւան, 1977, էջ 358-361:

49 ՀԺՀ, հ. XVII, Մոկս, թ. 42 «Նախընչու ախչիկ», Երեւան, 2012, էջ 391-398:

50 ՀԺՀ, հ. XVI, Վան-Վասպուրական, թ. 9, «Սուրբ Սարգիս», Երեւան, 2009, էջ 59-63:

51 ՀԺՀ, հ. V, Արցախ, թ. 4 «Պիրանան վարթ, մանիշակ թափվող ախճիգը», Երեւան, 1966, էջ 41-48. ՀԱԲ հ. 20, **Թ. Գեւորգյան,** թ. 6 «Աչքերը հանած աղջիկը», Երեւան, 1999, էջ 34-38:

52 Տես «Նախապաշարմունք», հ. Ա., աշխատասիրեց Յ. Նազարեանց, Տփխիս, 1878, էջ 32:

53 Տես անդ:

54 Տես **Վ. Պետոյան,** նշվ. աշխ., էջ 331:

55 Տես «Նախապաշարմունք», հ. Ա., աշխատասիրեց Յ. Նազարեանց, էջ 39:

56 Տես ՀԺՀ, հ. VIII, թ. 112, Երեւան, 1977, էջ 651-669:

57 Անդ, էջ 653: Նույն միտքն է արտահայտվում նաեւ վերոհիշյալ հեքիաթի փոփոխակ հանդիսացող «Վարդիթեր» հեքիաթում. «Ա՛խ, Աստված, բա ես ինց անեմ, քավորը

բանքով հրեշտակը քահանա եւ քավոր է բերում. «Գալիս ա, ասում ա. - Ազիզ քո՛յր, տեր հայրը եկել ա, հիմի քեզ հալալություն կտանք: Տերտերը փարաջեն հաքավ, երեխային դրեցին տաշտի մեջ, ինչ-որ մի բան լցրին ջուրը, երեխային լողացրին, ջրից հանեցին, դրին քավորի կոնների վրա ու սկսեցին օխնել»[58]:

Թե՛ ծննդկանը եւ թե՛ նորածինը համարվում էին անմաքուր, ուստի որոշակի արգելանքներ էին դրվում նրանց առջեւ: Երկուսն էլ ենթարկվում էին մեկուսացման, իսկ մկրտությունից հետո արդեն միանում էին հանրությանը[59], չնայած որ անցումային ողջ շրջանը նրանց համար տեւում էր քառասուն օր:

Ղզլարցիները հավատում էին, որ ալքերը[60] անկնունք երեխաներին կարող են գողանալ եւ վնաս հասցնել[61]: Սլավոնների մեջ եւս այն կարծիքը կար, որ չմկրտված երեխային հեշտությամբ աչքով կտան, եւ նա կարող է ենթարկվել անմաքուր զորության հարձակմանը[62]: Չեխական ժողովրդական «Հորոշեկն ու Մոխրոտը» հեքիաթում[63] չար ոգիները աղջկան մորից գողացել էին եւ հմայել, երբ նա դեռ կնքված չէր: Նա իրավունք չուներ եկեղեցու շեմից ներս մտնել[64]: Պսակից առաջ քահանան ասում է Մոխրոտին. «Մինչեւ հարսանիքը քեզ հարկավոր է կնքել: Դու սովորական մարդ ես, ինչպես բոլոր մարդիկ, բայց անկնունք ես: Իսկ դա կապ ունի գործի հետ. չէ՞ որ դու փախչում ես եկեղեցուց»[65]:

Ծննդկանը նույնպես համարվում էր խոցելի՝ չար ոգիների կողմից: Արճակցիների պատկերացմամբ, թեպետ ծննդկանը երեխայի մկրտությունից հետո «մեռոնվում էր» եւ սատանաների հետապնդումից զերծ համարվում, սակայն երեխայի բարուրը, առանց խաչակնքվելու, առանց «Հիսուս Քրիստոս» ասելու, չէր վերցնում, չէր լողացնում[66]: Լեռնային Ղարաբաղում ծննդկանը համարվում էր չարքերով համակված: Կնունքի

ըստեղ չի, իմ քահանեն ըստեղ չի, ես ինց անեմ իմ բալիկին հալալեմ, ջուրը քաշեմ» (ՀԺՀ, հ. I, Այրարատ, թ. 26, Երեւան, 1959, էջ 357):

58 Անդ, էջ 654:

59 Տես **А. Ван Геннеп**, Обряды перехода. Систематическое изучение обрядов, Москва, 1999, с. 51-63:

60 Իմա՛ չար ոգիներ:

61 Տես ՀԱԲ, հ. 10, Ղզլար, **Գ. Գեւորգյան,** էջ 66:

62 Տես **Г. Кабакова**, Дети некрещеные. “Славянские древности», Москва, с. 86:

63 «Չեխական ժողովրդական հեքիաթներ», ռուսերենից թարգմանեց **Շ. Գրիգորյանը**, Երեւան, 1982, էջ 120-136:

64 Տես անդ, էջ 128:

65 Անդ, էջ 136:

66 Տես ՀԱԲ, հ. 8, Արճակ, Ս.Ավագյան (Սերինե), էջ 88:

օրը տատմայրը կնքավազանից օծված ջուր էր բերում, որպեսզի, մինչեւ երեխային մորը հանձնելը, նա ձեռքերը լվանար եւ մաքուր ձեռքերով ընդուներ երեխային[67]: Նոր Բայազետում, եթե նորածինը մահանում էր մինչեւ կնքվելը, ապա ծննդկանը անմաքուր էր համարվում մինչեւ հաջորդ ծննդաբերությունը, մինչեւ «մեռոն տուն մտներ»[68]: Ի տարբերություն մյուս ազգագավառների՝ համշենահայերը, ծննդկանին անմաքուր չէին համարում եւ ոչ էլ նրա ափսեն զատում մյուսներից[69]:

Կնունքի ժամանակ տատմայրն իր առաքելությունն ուներ: Այրարատից գրառված «Վարդիթեր» հեքիաթը[70] մանրամասն թվում է մկրտության ծեսի մասնակիցներին. «Տատմերը ջուրը հազրեց, ղոնդաղը քանդեց, քավորը խտրտեց, տերտերը փուրվառ քցելով ջուրը քաշեց, մեռոնեց, անըմը դրեց Վարդիթեր: Բերին դրին մոր գիրկը»[71]:

Տատմայրն էր երեխայի շորերը փոխում՝ ջուրն ընկղմելուց առաջ եւ հետո[72]: Մուշում եւ Կեսարիայում, օրինակ, տատմայրն ինքն էր մյուռոնից հանում երեխային[73]. լվանում էր նրա՝ մյուռոն քսված մասերը, հետո լողացնում: Նոր Բայազետում մյուռոնից հանելիս քահանայի մասնակցությունը պարտադիր էր, որն աստիճանաբար վերացել էր[74]: Կնունքից հետո տատմայրն ու ծննդկանը համարվում էին մաքրված:

Բուլանըխում տատմայրը մկրտված երեխային բերում էր, դնում մոր կողքին՝ մաղի վրա[75], Մուշում՝ մոր կողքին դրված մկրատի կամ դանակի[76] վրա շուռ տված մաղի վրա, որտեղ երեխան մի քանի ժամ մնում էր[77]: Երբեմն նույնիսկ կնքահոր բացակայության դեպքում երեխային դնում էին ալյուրի մաղի վրա եւ ծեսը կատարում. սույն պարագայում «քավորին փոխարինում էր» ալյուրի մաղը[78]: Ըստ Բենսեի՝ մաղը ոմանք կապում են

---

[67] Տես ՀԱԲ, հ. 12, **Ս. Լիսիցյան,** Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Երեւան, 1981, էջ 50:

[68] **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, ԱՀ, գիրք XVI, Թիֆլիս, 1907, էջ 38:

[69] Տես **Յ. Մուրադեանց,** Համշէնցի հայեր, ԱՀ, գիրք Ե., էջ 364:

[70] Տես ՀԺՀ, հ. I Այրարատ, թ. 26, էջ 355-367:

[71] Անդ, էջ 357:

[72] Տես **Գ. Գյոզալյան,** Մուսա լեռան ազգագրությունը, Երեւան, 2001, էջ 172-173:

[73] Տես «Պատմութիւն հայ Կեսարիոյ», Տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն **Ար. Ալպոյաճեանէ,** էջ 1734:

[74] Տես **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք. ԱՀ, գիրք XVI, էջ 41:

[75] Տես **Բենսէ,** Բուլանըխ կամ Հարք գաւառ. ԱՀ, գիրք Ե., էջ 126:

[76] Սուրսայր գործիքները համարվում են չարխափան:

[77] Տես **Ե. Լալայեան,** Մուշ-Տարօն. ԱՀ, գիրք XXVI, էջ 180:

[78] Տես **Վ. Պետոյան,** Սասնա ազգագրությունը, էջ 278:

մեռոնի սրբության, ոմանք էլ՝ չարի ու բարու գոյության հետ[79]: Քանի որ քավորի կերպարը առնչվում է ընտանեկան օջախի ունեւորության եւ արգասաբերության պատկերացման հետ, եւ իր հերթին ալրամաղն առատության եւ սրբության խորհրդանիշ է, հետեւաբար, պատահական չէ կնքահորը մաղով փոխարինելը[80]: Մաղը միաժամանակ չար ուժերի համար այսրաշխարհ ներթափանցելու խոչընդոտ է, սահման[81], ուստի գործածվում է մկրտության ժամանակ նույնպես, քանի որ մկրտությունն անցումային ծես է:

Կնունքի նարոտը նետելը մեղք էր համարվում[82]: Դեռեւս ԺԴ. դարում Գրիգոր Տաթեւացին խոսում է երկգույն նարոտի մասին՝ սպիտակ եւ կարմիր՝ իբրեւ Քրիստոսի կողից բխած արյան եւ ջրի խորհուրդ[83]: Ըստ Սահակ վրդ. Ամատունու՝ նարոտը եռագույն (կանաչ, կարմիր եւ սպիտակ) մետաքսյա թել է, որը մկրտության ժամանակ կապում են երեխայի վզին, իսկ պսակի ժամանակ՝ հարսի ու փեսայի վզին[84]: Ժողովրդական պատկերացումներում մկրտության նարոտը գալիս զուգադրվում է հարսանեկան նարոտի հետ[85], քանի որ երկու դեպքում էլ օգտագործվում են կանաչ եւ կարմիր գույների թելերը: Կարմիրը կյանքի խորհրդանիշն էր, իսկ կանաչը՝ սերնդի շարունակության[86]: Այդ գույները մի կողմից չարխափան են, մյուս կողմից ապահովում են երկարակեցությունը[87]:

Հայկական ժողովրդական հեքիաթներում արտացոլվել է այն իրողությունը, որ երեխային մկրտելու ժամանակ նաեւ անվանադրել են[88]. «Տղին

---

79 Տես **Բենսէ,** Բուլանըխ կամ Հարք գաւառ. ԱՀ, գիրք Ե., էջ 127:

80 Տես **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի մանկան ծննդի եւ խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, Երեւան, 2011, էջ 98. Նույնի՝ Քավորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական տվյալների), ՊԲՀ, 2007, 1, էջ 127-128:

81 Տես **Գ. Շագոյան,** «Յոթ օր, յոթ գիշեր». Հայոց հարսանիքի համայնապատկեր, Երեւան, 2011, էջ 208. **Ս. Լիսիցյան,** Զանգեզուրի հայերը, Երեւան, 1969, էջ 203:

82 Տես **Վ. Բդոյան,** Հողաբերքի եւ տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, թեկն. ատենախոսություն, Երեւան, 1947, էջ 256:

83 Տես **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1739, էջ 564:

84 Տես «Հայոց բառ ու բան», աշխատասիրեց **Ս. վրդ. Ամատունի,** Վաղարշապատ, 1912, էջ 501:

85 **Զ. վրդ. Բաղումյան,** 200 հարց Ս. Մկրտության մասին, էջ 203:

86 Ա. Մուշեղյանը կանաչի ու կարմիրի խորհուրդը մեկնում է՝ առնչակցելով դրանք կապ գցելու եւ կապ բանալու հետ, իսկ սպիտակը՝ հաշտության, փրկության եւ հավերժության (**Ա. Մուշեղյան,** Նարաւտի խորհուրդը եւ ստուգաբանությունը. «Հայ ժողովրդական մշակույթ», IX, Զեկուցումների հիմնադրույթներ, Երեւան, 1997, էջ 40):

87 Տես **Վ. Բդոյան,** Հողաբերքի եւ տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, էջ 262:

88 Տես **Թ. Հայրապետյան,** Անվանադրության մշակույթը հայ ժողովրդական հեքիաթներում. «Հայ ժողովրդական մշակույթ XV», Ավանդականը եւ արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիր-

մկրտեցին, անըմը դրին Կարապետ»[89], կամ «Տերտերը էդ էրեխին մկրտըմ ա, անըմը դնըմ ա Դավիթ, թաքավորն էլ ըլըմ ա քավոր»[90]: Հոգեւորականից բացի՝ երեխային անուն էր տալիս նաեւ կնքահայրը: Հեքիաթներում կնքահայր դերվիշը ծննդից տարիներ անց գալիս է, անվանադրում սանիկին եւ ենթարկում նվիրագործման ծեսին[91]:

Հայոց մեջ քահանաները անուններ ընտրելիս[92] սովորաբար դիմում էին եկեղեցական օրացույցի օգնությանը՝ տվյալ օրվա սրբի անվամբ կոչելու մկրտվող երեխային, կամ էլ տատի ու պապի անուններով էին անվանվում երեխաները: Վասպուրականում, եթե երեխան համարվում էր սրբի տված, ապա նրան մկրտում էին այն սրբավայրում, որտեղ ուխտի էր գնացել նրա մայրը, եւ երեխային անվանակոչում էին Աստվածատուր, Քրիստոսատուր, Տիրատուր[93]: Ուշագրավ է, որ հայկական անունների մեջ իրենց տեղն ունեն նաեւ Քրիստոսի երկրային տնօրինության հետ կապված ինչպես Գալուստ, Հարություն, Համբարձում, այնպես էլ Մկրտում[94] անունները: Մկրտումն այսօր այլեւս չի կիրառվում: Սակայն գործածական է մնում Մկրտիչ անունը, որը կապված է Քրիստոսին Հորդանանում մկրտող Հովհաննես Մկրտչի[95] անվան հետ:

Մկրտության ավազանի լվացմամբ երեխան հեռանում է այն անմաքուր աշխարհից, որում նախապես գտնվում էր, իսկ կնքվելով ներառվում է որոշակի սոցիումում (ադամական մեղքից մաքրվածների): Տրվող կնքաճաշը[96] եւ նվերների փոխանակությունը նորածնի՝ ընտանիքի ան-

---

ված հոդվածների ժողովածու, Երեւան, 2010, էջ 574-586:

[89] ՀԺՀ, հ. I (Այրարատ), թ. 35, «Կարապետ-բեկի հեքիաթը», Երեւան, 1959, էջ 457:

[90] Անդ, թ. 21, «Դավթի հեքիաթը», էջ 297:

[91] Հ. Յ. Ութերի հեքիաթների միջազգային համացույցում այդ հեքիաթախումբը թվանշված է ATU 303 եւ խորագրված «Երկվորյակներ կամ արյունակից եղբայրներ»:

[92] Տես ՀԱԲ, հ. 10, Ղզլար, **Գ. Գեւորգյան,** էջ 53-54. ՀԱԲ, հ. 12, Լեռնային Ղարաբաղի հայերը, **Ս. Լիսիցյան,** Երեւան, 1981, էջ 50:

[93] **Ե. Լալայեան,** Վասպուրական. «Ազգագրական հանդէս», գիրք XX, էջ 163:

[94] Այս անվամբ հայտնի է նաեւ հայազգի նկարիչ Մկրտում Հովնաթանյանը (1779-1846):

[95] Տու յոթն անուն ունես թամամ. // Առաճ անուն էր Մարգարա՝ // Մոր արգանդեն մարգարացար. // Երկու անուն էր Օհանես՝ // Քո հոր կապած լեզուն պացար. // Իրեք անուն ի Առաքյալ՝ // Առաքելոց քարոզացար. Քո չորս անուն ի Մարտիրոս՝ // Իսրայելի ազգ մարտիրոսցավ. // Քո հինգ անուն էր Մկրտիչ՝ // Մեռոն լցիր մեջ քո ափից, // Մկրտեցիր Տերն արարիչ, // Մկրտարար սուրբ Կարապետ: // Քո վեց անուն ի Ավետիք՝ Տըժոխք Ատամա ավետիք տարար. // Քո յոթն անուն՝ սուրփ Կարապետ... (**Ս. Հարությունյան,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 155):

[96] Տես **Ե. Լալայեան,** Վասպուրական. «Ազգագրական հանդէս», գիրք XX, էջ 176. **Ե. Լալայեան,** Մուշ-Տարօն. ԱՀ, գիրք XXVI, էջ 180-181. **Վ. Պետոյան,** Սասնա ազգագրությունը, էջ 278. Պատմութիւն հայ Կեսարիոյ. Տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն **Ա. Ալպոյաճեանէ,** հ. Բ., էջ 1734:

դամ դառնալու, սոցիալական հարմարվողության առաջին շրջանն են[97]: Անուն ստանալով՝ նա դառնում է հասարակության անդամ եւ առանձնանում իբրեւ անհատ[98]:

Նոր Բայազետում կնքահոր կողմից սանիկին արծաթե կամ ոսկե խաչ նվիրելը համարվում էր ռուսական ազդեցություն[99]:

Հայ ժողովրդական հեքիաթների տարածված մոտիվներից է աղքատի զավակին Գաբրիել հրեշտակի՝ կնքահայր դառնալը: «Ցոքեաուը» հեքիաթում[100] աղքատ մարդն ուզում էր գնալ Աստծուն գանգատ, որ իրեն զավակներ է պարգեւում, սակայն աղքատության պատճառով ոչ ոք չէր ցանկանում լինել նրանց կնքահայր, բացի այդ՝ քահանան էլ չէր մկրտում: Ի վերջո Գաբրիել հրեշտակն է նրանց կնքահայր դառնում եւ աղքատ մարդուն բժշկության շնորհ տալիս:

ԺԹ. դարավերջին հատկապես համշենահայերի համար կնքահայր լինելը այնքան ցանկալի ու նախանձելի իրողություն էր, որ «ամենքն են ուզում սանիկ ունենալ: Դա համշէնցիների կարծիքով մեծ վարձք է: Մարդ անպատճառ գոնէ մի սանիկ պիտի ունենայ կնքած: Նրանց կարծիքով՝ ով որ իր կեանքում բոլորովին երեխայ չի կնքել, միւս կեանքում նրա գրկին մի շուն կը դնեն»[101]: Հայտնի է, որ շունը մահվան սարսափի անձնավորումն է[102]:

Սանիկի տանը կնքահայրը հարգ ու պատիվ ուներ: Բաղեշում Աստծուց ներքեւ քավորն էր[103]: Կնքահայրը, ինչպես հայտնի է, սանիկի երկրորդ ծնողն է եւ նրա հոգեւոր կյանքի պատասխանատուն[104], չնայած, օրինակ, Արճակում կնքահայրը կարող էր լինել նաեւ պատանի[105]: Ղարադաղում եղել են դեպքեր, երբ հայերն իրենց երեխաների մկրտության քավոր են ընտրել թուրք ծանոթներին, իսկ թուրքերը մտերիմ հայերին «քիրվա» են նշանակել իրենց երեխաների թլպատության ժամանակ[106]:

---

97 Տես **Т. Агапкина,** Дар, дарить. «Славянские древности», т. 2, Москва, 1999, с. 20:
98 Տես **А. Ван Геннеп**, նշվ. աշխ., с. 62:
99 Տես **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք. ԱՀ, գիրք XVI, էջ 39:
100 Տես ՀԺՀ, հ. VIII, Գուգարք (Լոռի), թ. 61, էջ 400-401:
101 **Յ. Մուրադեանց,** Համշէնցի հայեր, ԱՀ, գիրք Ե., էջ 364:
102 Տես **Ս. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 425:
103 Տես **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի մանկան ծննդի եւ խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, էջ 98:
104 Տես **Զ. վրդ. Բաղումյան,** նշվ. աշխ., էջ 108-109:
105 Տես ՀԱԲ, հ. 8, Արճակ, Ս. Ավագյան (Սերինե), էջ 73:
106 Տես **Հ. Հովսեփյան,** Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, էջ 341:

Իբրեւ սրբության դրսեւորում՝ սանամորն արգելված էր խոսել կնքահոր հետ, միայն տոների ժամանակ նրանք նվերներ էին միմյանց ուղարկում[107]*:*

«Սուրթ ճքնավորն ու շուն քավորը» հեքիաթում[108] *քավորը սանահոր մահից հետո կապվել էր նրա կնոջ հետ, եւ այդ անօրեն կապից երեխա էր ծնվել: Նրանք պատրաստվում էին երեխային խեղդել: Արդարամիտ թագավորը երեխայի լացը մեկնաբանում է հետեւյալ կերպ. «Էրեխեն լալում ա, ասում ա. «Հուր ա քո արթարութունը, թաքավոր, ես ինչ մեղավոր եմ, որ ընձի տանում են սպանելու»*[109]*: Նա քննում է քավորի հանցանքների թիվը. «Քավորը կանանչ մեռոնը ոտի տակ ա տվե, սանամոր խետ չնութուն ա արե, քիչ ա, հիմի էլ ուզում են էրեխին սպանեն»*[110]*: Եվ վճիռը լինում է քավորին կախաղան բարձրացնելը:*

«Օսկերչու աշկերտ» հեքիաթում[111] *արտահայտված է այն մտայնությունը, թե ապօրինի ծնունդը արժանի չէ մկրտության: Այստեղ թագավորը տեսնում է, որ երեխան լաց է լինում մոր գրկին, հարցնում է պատճառը: Աստծո հրամանով երեխան լեզու է առնում եւ պատմում, որ ինքը ապօրինի ծնունդ է: Մոր ամուսինը գնացել է պանդխտության: Մոր հետ սկսել է կենակցել նրա տեգրը. «Ես էն մեղքեն եմ ընծայի: Հ'էսօր լե վերցած են զիս, կրանեն ավազան, կբոռամ, ճրվամ, կասեմ ես արժանավոր չեմ էն ավազանի մեջ լողկրնամ, մարդ անկաճ չէնե: Իմ լացու պատճառն էդ է»*[112]*: Թագավորը հրամայում է երեխայի հորը պատժել, նոր միայն մկրտել նրան: Նույն պատկերացումներն են իշխում նաեւ «Դայաղի հեքիաթում»*[113]*. «Էտի բիճ ա, բճին ոչ կնքում են, ոչ էլ պատիվ են տալում»*[114]*:*

Չնայած որ հայոց կանոնագրքերում չեն հանդիպում ապօրինածին երեխաների կնունքն արգելող կանոններ, սակայն բանահյուսության մեջ վկայված այս սակավադեպ օրինակներն ազգագրական տվյալներով եւս պետք է, որ գտնեն իրենց հաստատումը: Ի. դարասկզբին Նոր Բայազետում հղիության արհեստական ընդհատման դիմում էին ապօրինի կե-

---

[107] Տես **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, ԱՀ, գիրք XVI, էջ 38. **Ե. Լալայեան,** Կասպուրական, ԱՀ, գիրք XX, էջ 175:

[108] ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Դդմաշեն գյուղի հեքիաթները, **Գ. Ստեփանյանի** ֆոնդ, FFXII:2034-2038:

[109] Անդ, թ. 2037:

[110] Անդ, թ. 2038:

[111] Տես ՀԺՀ, հ. XIII, Տուրուբերան (Մուշ-Տարոն), թ. 51, Երեւան, 1985, էջ 400-406:

[112] Անդ, էջ 405:

[113] ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, **Գ. Ստեփանյանի** ֆոնդ, FFXII:2275-2304:

[114] Անդ, թ. 2281:

նակցությունից ծնվելիք երեխաների դեպքում, քանի որ հասարակությունը դատապարտում էր «ապօրինի կեցությունը եւ նոյնիսկ ապօրինի զաւակին»[115] *(ընդգծումը մերն է՝ Ք. Ա.):*

Ըստ եկեղեցական կանոնակարգի[116]*՝ արգելված էր կնքահոր ընտանիքի հետ խնամիության հաստատումը, իսկ ըստ ժողովրդական մտածողության՝ արգելքը վերաբերում էր մինչեւ յոթերորդ սերնդին*[117]*:*

Կնքահոր եւ մյուռոնի նկատմամբ հայերի ունեցած ակնածանքն ու երկյուղածությունն են երեւան գալիս «Կնքահար ըլալը թանգ է[118]*, անուն դնելը բան չէ», «Քավորը փոխիլ, մեռոնը կոխիլ (արհամարհել)» ասացվածքներում*[119]*: Կնքահայրը սովորաբար տոհմական էր, նրան փոխում էին այն դեպքում, երբ նրա մկրտած երեխաները չէին ապրում, կամ աղջիկներ էին ծնվում*[120]*: Մի քանի հարյուր տարի կարող էր ձգվել տոհմական քավորությունը: Մուշում երդվելիս գործածվում էր «Էն կուժ մէռոն վկայ էղնի» արտահայտությունը, այսինքն՝ այնքան մեռոն էին տուն բերել երեխաներին մկրտելով, որ կարող էին մի ամբողջ կուժ լցնել*[121]*: Երբ քավորությունը փոխադարձ էր, քավորին անվանում էին խաչ-քավոր*[122]*:*

Հայ ժողովրդական հանելուկներում մյուռոնի համար համեմատության եզրեր են ընտրվել մրգերը.

Միլաթու (Խլաթի) խնձոր Թավրիզուն մուրիկ,
Ես հորես-մորես, դու նռան հատրիկ[123]*:*

Կամ՝ *Լալահան խնձոր,*
Նոնռան հատրիկ,
Թավրիզու մուրիկ[124]*:*

---

[115] **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք. «Ազգագրական հանդէս», գիրք XVI, էջ 32:

[116] Տես **Ն. սրկ. Մելիք-Թանգյան,** Հոգեւոր ազգակցութեան մասին մի քանի խօսք. «Արարատ», 1900, թ. Ժ., հոկտեմբեր, էջ 472:

[117] Տես **Ռ. Նահապետյան,** Քավորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական տվյալների). ՊԲՀ, 2007, թ. 1, էջ 127:

[118] Այսօր էլ, ինչպես անցյալում, կա այն մտայնությունը, որ կնքահայրը պետք է ունեւոր լինի՝ համապատասխան ծախսերը հոգալու համար:

[119] **Ա. Ղանալանյան,** Առածանի, Երեւան, 1960, էջ 275:

[120] Տես **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի մանկան ծննդի եւ խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, էջ 90:

[121] Տես **Ե. Լալայեան**, Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք XXVI, էջ 180:

[122] Տես անդ:

[123] **Ս. Հարությունյան,** Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, էջ 195:

[124] Անդ:

Ըստ բանագետ Ս. Հարությունյանի՝ «նռան հատիկ» արտահայտությամբ, հավանական է, շեշտվել է մյուռոնի անապակ մաքրությունը, իսկ «Ախլաթա խնձոր» արտահայտությամբ՝ բույրը[125]: Ժողովրդական խոսքում առայսօր տարածված են «մեռոնի պես ընտիր» եւ «մեռոն-մատաղ» արտահայտությունները[126]:

Կիլիկիայի հայերը մյուռոնի զորությամբ անխոցելի եւ պաշտպանված զգալու համար հետեւյալ աղոթքն էին ասում, որը գրառվել է թուրքալեզու տարբերակով.

Եաթդրմ, Ալլահ, քալդրր բէնի,	*Պառկեմ, Աստվա՜ծ, պահպանի՛ր ինձ,*
Սուրբ մէոնա դալդրր բէնի,	*Սուրբ միոնում թաթախի՛ր ինձ,*
Գէճէ-գիւնդիւզ դուվա էդէրիմ,	*Գիշեր-ցերեկ աղոթք կանեմ,*
Ջէնէթիմէ գէօնդէր բէնի.	*Որ դրախտդ ինձ ուղարկես.*
Եաթդրմ սաղ եանրմա,	*Պառկեցի աջ կողքիս,*
Դէնդրմ սոլ եանրմա,	*Շրջվեցի ձախ կողքիս,*
Հրէշտակլար գէլէճէք,	*Հրեշտակները գալու են,*
Գիւնահրմր աֆ էդէճէք.	*Իմ մեղքերը քավելու են:*
Ամէն:	*Ամեն[127]:*

Իսկ մի ավանդազրույցի համաձայն՝ Զորավար Անդրանիկի անխոցելիությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ նրան մկրտության ջրի մեջ ընկղմել է Սուրբ Գեւորգը, որից հետո նրա մեջքին խաչ է դրոշմվել[128]:

Մյուռոնը ոչ միայն զորավոր է, այլեւ դիվահալած: Հայկական ժողովրդական էպոսի պատումներից մեկում[129] Ջենով Հովանը Մարութա վանքի կառուցման մասին ասում է. «Տավիթ ջան, մենք ես քսան տարի ի կը չինենք, դեվեր կը քանդեն, մենք ել ծեռ քաշիր ենք, ել չենք չինե»: Դավիթը ողջ ժողովրդին հավաքում է, մի օրում կառուցում-վերջացնում

---

125 Տես անդ, էջ 314:

126 Տես **Պ. Բեդիրյան,** Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, էջ 943:

127 **Վ. Սվազլյան,** Կիլիկիա. Արեւմտահայոց բանավոր ավանդությունը, Երեւան, 1994, էջ 249:

128 Տես **Ա. Ղանալանյան,** Ավանդապատում, № 767 Ա, Երեւան, 1969, էջ 298:

129 «Սասունա Տավիթ», պատմեց բաշկալեցի Վարդան Վարդանյան, գրի առավ Ա. Ղանալանյան 1936 թ.. «Սասնա ծռեր», հ. Բ., մասն Բ., խմբագրեց **Մ. Աբեղյան,** Յերեվան, 1951, էջ 631-632:

են: «Քառսուն տերտեր, քառսուն վարտապետ, քառսուն սարկավաք, քառսուն տիրացի» պատարագ են անում եւ օծում սեղանը:

Դավիթը գիշերը մնում է վանքում, որ դեւերի գալուն պես կոտորի նրանց: Հորեղբայրը հանգստացնում է նրան.

- Տավիթ ջան, են վոր քառսուն վարտապետ, քառսուն տերտեր, քառսուն սարկավաք, քառսուն տիրացի մի շուշա մեռոն թափին մեր վանքի սեղանի վրեն, ոծին, պատարաք արին, դեվեր փախան, էլ դեվեր չեն իկա ըստեղ[130]*:*

Նույնատիպ ավանդություն է կապված Անձեւացյաց գավառի Հոգոց վանքի հետ, որի շինարարությանը նույնպես դեւերը խոչընդոտում էին: Աստվածամայրը երեւում է վարպետ-շինարարներին եւ ասում, որ անհրաժեշտ է մեկ օրում կառուցել վանքը եւ օծել*[131]*:

«Սասնա ծռերում» հանդիպում է թոնրի վրա մկրտելու օրինակ, սակայն այդ քայլին հերոսները գնում են Կռապաշտ թագավորի երկրում գտնվելու հարկից ելնելով: Խաչապաշտ թագավորը վարդապետին կնոջ շորեր է հագցնում, աղջկա հետ ուղարկում, որ երեխա ունենալիս վարդապետը կնքի թոնրի վրա:

Ինքը ամիս վոր թամամից,
Ասրվածութուն Խաչապաշտ թագավորի աղջկան
Երկու տղա տվից.
Վարդապետ թոնդրան վրա կնքից[132]*:*

Մի այլ պատումում թեպետ թոնրի վրա կնքելու պահը բացակայում է, սակայն Սինամ թագավորը աղջկա հետ քահանային է ուղեւորում, քանի որ աղջիկը հայտարարում է.

- Թակավոր, առանց մեռոն չեղնի:
Զղերդեր գընդից, տրից հրդ ըր ահճգան[133]*:*

---

[130] Անդ, էջ 632:

[131] Տես **Ա. Ղանալանյան,** Ավանդապատում, թ. 666, էջ 246-247:

[132] «Սանասար եւ Բաղդասար», պատմեց մի մոկացի, գրի առավ Գարեգին Հովսեփյան. «Սասնա ծռեր», հ. Ա., խմբագրեց **Մ. Աբեղյան,** Յերեվան, 1936, էջ 129:

[133] «Սասնա տուն», պատմեց սասունցի Թամո Դավթյան, գրի առավ Կարապետ Մելիք Ոհանջանյան 1932 թ.. «Սասնա ծռեր», հ. Բ., առաջին մաս, խմբագրեց **Մ. Աբեղյան,** Յերեվան, 1944, էջ 159-160:

Երբ ծնվում են Սանասարն ու Պաղտասարը, «դերդեր զուրանք գընքից»[134]*:*

Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի եւ Ներսես կաթողիկոսի կանոններով արգելվում էր տանը մկրտություն անել, եթե մահվան վտանգ չկա[135]*, սակայն մինչեւ Ի. դարասկիզբ, ինչպես փաստում են ազգագրական տեղեկությունները, երբեմն մկրտություն էին անում նաեւ տանը՝ թոնրի մոտ*[136]*: Դա հատկապես անում էին մահամերձ նորածիններին մկրտելիս*[137]*՝ կամ եկեղեցի չլինելու կամ հեռու գտնվելու պատճառով*[138]*: Համշենցիները երեխայի մկրտությունը կատարում էին եկեղեցում, իրենց տանը կամ քահանայի տանը*[139]*: Մուշ-Տարոնում սգավորներն էին մկրտությունն անում տանը*[140]*: Ղզլարում կնունքը կատարվում էր եկեղեցում, լինում էր նաեւ երեխայի տանը, հատկապես այդ զիջումն արվում էր ունեւոր ծխականներին*[141]*: Նոր Նախիջեւանի գյուղերում հազվադեպ, բայց քաղաքում հաճախակի էին «չարժական ավազան» գործածում, առավելաբար ցուրտ եղանակի դեպքում քահանաները մկրտությունն անում էին տանը*[142]*:*

---

[134] Անդ, էջ 160:

[135] «... Ի տունս շինականացն քահանայք մկրտութիւն մի իշխեսցեն առնել, բայց վասն երկիւղի մահու թէ վտանգ ինչ իցէ» (Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Սամիկոնէից եպիսկոպոսի. «Կանոնագիրք հայոց», Ա., աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի,** Երեւան, 1964, էջ 485, ինչպես նաեւ՝ Դվինի Բ. ժողով, 555 թ., ԺԵ. կանոն. **Ն. վրդ. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 310): Մկրտությունը հրահանգում էր պարտադիր եկեղեցում կատարել նաեւ Գեորգ Դ. կաթողիկոսն իր կոնդակում. «Աւագ քահանային պարտ է ի միտ դնել, զի փութով ի միջոցի ութն աւուր անխափան մկրտեսցին մանկունք նորածինք, եւ մկրտութիւնն անշուշտ կատարեսցի յեկեղեցւոջ, առ ընթեր ունելով իւրեանց ի պաշտամանն զսարկաւագունս եւ զդպիրս» (**Ն. վրդ. Մելիք-Թանգյան,** Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 526):

[136] Թոնիրը համարվում էր սուրբ եւ եկեղեցուն հավասար («Սասնա ծռեր», հ. Բ., մաս Բ., խմբագրեց **Մ. Աբեղյան,** Յերեվան, 1951, էջ 841): Այն, կարելի է ասել, «տան մատուռն էր» (**Ա. Ահարոնեան,** Հայկական հին հաւատալիքները, «Հայրենիք», 1940, թ. 5, էջ 51-57): Հայտնի է, որ թոնրի շուրջը նաեւ պսակ էր արվում:

[137] Տես **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի մանկան ծննդի եւ խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, էջ 92. Նույնի՝ Քավորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական տվյալների). ՊԲՀ, 2007, 1, էջ 127-128:

[138] Տես **Ե. Լալայեան,** Վասպուրական. Հաւատք, ԱՀ, գիրք XXV, Թիֆլիս, 1913, էջ 51:

[139] Տես **Յ. Մուրադեանց,** Համշէնցի հայեր, ԱՀ, գիրք Ե., էջ 364:

[140] Տես **Ե. Լալայեան,** Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք XXVI, էջ 180:

[141] Տես ՀԱԲ, հ. 10, Ղզլար, **Գ. Գեւորգյան,** էջ 52-53:

[142] Տես **Ե. Շահազիզ,** Նոր-Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք, ԱՀ, VII եւ VIII գրքեր, էջ 98:

Մկրտությունն առաջնահերթ փրկագործ նշանակություն ուներ: Հայ ժողովրդական աղոթքներից մեկում մեղավոր մարդն ինքն իրեն մխիթարում է նրանով, որ կնքված է.

Գլուխս բարձի տրի,
Հոգիս Էմնեթ տվի.
Հոգիս, չվախենամ՝
Մեռոնած իս, կնքած իս,
Սուրբ ավազան մկրտած իս[143]...

Իսկ մեկ այլ աղոթքում «Դատաստանի» ժամանակ Աստվածամայրը մեղավորների փրկության համար բարեխոսում է իր որդուն՝ ապավինելով նաեւ մկրտության ավազանին:

Ասաց. – Տե՛ր, մի տանիր մեղավորս մեղաց,
Քու յավազան ա մկրտած,
Քու խաչին ա դիպուցած[144]*:*

Հայ ժողովրդական պատկերացումների համաձայն՝ մարդուն երկու հրեշտակ է տրվում, մեկը՝ ծննդյան պահին, մյուսը՝ մկրտության, հետեւաբար մահմեդականները միայն մեկ հրեշտակ ունեն[145]***: Կար նաեւ այն հավատալիքը, որ երբ թուրքերն ու քրդերը լողանում են, ջուրը նրանց վրա «պտուղ-պտուղ (կաթիլ-կաթիլ) չի կանգնում»՝ մեռոնով կնքված եւ քրիստոնյա չլինելու պատճառով***[146]***:***

Բանահյուսական տարբեր նմուշներում երեւում է, որ հայերի այլակրոն հարեւաններն իրենք էլ զգացել եւ գիտակցել են մկրտության կենսականությունը: Լոռուց գրառված «Աստված ողորմած ա» հեքիաթում[147] ***հրեան, տեսնելով հայի հավատի եւ Աստծո զորությունը, «մկրտվում,***

---

[143] Հայ հմայական եւ ժողովրդական աղոթքներ, աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի, Երեւան, 2006, էջ 176:
[144] Անդ, էջ 114:
[145] Տես «Հայ-ժողովրդական հէքիաթներ», ժողովածու Տ. Նաւասարդեանց, յօթներորդ գիրք, Թիֆլիս, էջ 25. **Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Է., Երեւան, 1975, էջ 22:
[146] Տես ԷԱԺ, հ. Ա., Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 202:
[147] Տես անդ, թ. 7, էջ 62-64:

դառնում ա հայ»[148]*: Սույն հեքիաթում հավասարարժեք են դարձել էթնիկական ինքնությունն ու մկրտությունը*[149]*:*

Մոկսից գրառված «Շահբազ Մելիքյ» հեքիաթում[150] *փաստարկվում է մկրտության առավելությունը: Այստեղ կնունքի ժամանակ մարդու ստացած շնորհները կարծես նյութականանում են: Քուրդ աղջիկը տեսնում է՝ ինչպես հայ տղայի բերանից քնած ժամանակ լույսի շող է ելնում-մտնում: Հայ տղան՝ Աղավանը, բացատրում է, որ դա մյուռոնի շնորհն է, իսկ քրդերը «անմեռոն» են: Երբ քուրդ աղջիկը՝ Փարիշանը, մկրտվում է, նրա բերանից եւս այդպիսի լույսի շող է ելնում: Այստեղ նույնպես կնքվելը քրդուհու համար հավասարազոր է դառնում հայանալու հետ. «Իմ ախպոր տըղին պիտի ըսպանեն, օր քյըրտու ախչիկ խայացուցե, պիտի առնի»*[151]*: Շահի եղբայրն ասում է, որ դա «գյեչ պան ա»*[152]*:*

Շահը կանչել-բերել է տալիս երկու վարդապետ, երկու քահանա, որ գետի մեջ պսակեն Աղավանին ու Փարիշանին: Եթե գետի ջուրը կանգ առնի, նրանք ազատ են, եթե ոչ՝ նրանց եւ եկեղեցականների վիզը կտրել կտա: Վերջիններս, սարսափահար եղած, Աստված են կանչում. «Մե ազատես էսա գազանի ծեռնեն»: Երեւան է գալիս քրիստոնեական կրոնի գերազանցությունը: Աստծու հրամանով ջուրը կանգ է առնում պսակադրության ընթացքում (հմմտ. Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից Եփրատի մեջ ժողովրդի մկրտվելու հետ)[153]*: Շահը նրանց ազատ է արձակում, իսկ աղջկա հայրը ընտանիքով որոշում է «տառնալ խայ»*[154]*:*

Գետի հոսքի կանգ առնելը[155]*, ետ դառնալն ու լույսի ի հայտ գալը հանդիպում են հայ պատմիչների երկերում՝ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի աղոթքով եւ հայ եկեղեցական ծիսակարգով կատարված ջրօրհնեքի ժամանակ: «Եւ յաղօթել հայրապետին Պետրոսի՝ դարձաւ ջուր գետոյն ի վեր, եւ լոյս սաստիկ ծագեաց, որ նուաղեցուցանէր զճառագայթս արե-*

---

148 Անդ, էջ 64:

149 Տես **Ե. Զաքարյան,** Կրոնը եւ կրոնավորները հայ ժողովրդական հեքիաթներում: Սույն հոդվածի տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում հեղինակին:

150 Տես ՀԺՀ, հ. XVII, Մոկս, թ. 7, Երեւան, 2012, էջ 75-86:

151 Անդ, էջ 81:

152 Անդ, էջ 84:

153 «Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն Եփրատ գետոյն՝ նշան սքանչելի երեւեալ յԱստուծոյ. զի զետղ առեալ ջուրք գետոյն՝ անդրէն դարձան ընդ կրունկն» («**Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց», Երեւան, 1983, էջ 464):

154 ՀԺՀ, հ. XVII, Մոկս, թ. 7, էջ 85-86:

155 Առհասարակ այն հավատալիքը կար, որ Ջրօրհնեքին ջրերը մի քանի վայրկյան կանգ են առնում, քանի որ Քրիստոսի մկրտության ժամանակ եւս Հորդանանը կանգ է առել (տես «Նախապաշարմունք», հ. Ա., աշխատասիրեց Յ. Նազարեանց, էջ 76):

գականն»[156]: Արիստակես Լաստիվերցի պատմիչն ավելացնում է մյուռոնի հեղման պարագան. «Եւ ի հեղուլ հայրապետին զտէրունական իւղն ի ջուրսն, ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն»[157]:

Ավանդությունը մյուռոնի հետ է կապում Գանձակում գտնվող Մռուտ կամ Մեռոնուտ մատուռի անվան ստուգաբանությունը, ըստ որի՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից խաչը օծվում է Սրբալույս մյուռոնով եւ տեղադրվում ժողովրդի պաշտամունքի համար[158]:

Դեռեւս Ի. դարասկզբին Նորնախիջեւանցիները ուխտի էին գնում Ս. Էջմիածին՝ մյուռոնօրհնեքի արարողությանը ներկա գտնվելու, մյուռոնի կաթսան համբուրելու եւ իրենց աչքով տեսնելու «Ս. մեռոնի եփ եկածը»[159]:

Մյուռոնի նկատմամբ երկյուղն այնքան մեծ էր, որ Վասպուրականում, երբ մկրտված երեխային քահանան եւ քավորը եկեղեցուց բերում էին տուն, ծննդկանը, ի պատիվ մյուռոնի, տեղից վեր էր կենում ու նորից նստում[160]: Մյուռոնից հանելուց հետո Արճակում մյուռոնաջուրը լցնում էին տան կտուրը, որպեսզի այն չկոխկրտվի[161]: Վասպուրականում եւ Նոր Բայազետում մյուռոնաջուրն աշխատում էին պահել, որպեսզի երբ մկները կամ շները պղծեին կաթսաներն ու ամանները, նրանով կամ նրանով շաղախված հողով լվանային դրանք[162]:

Մյուռոնից հանելիս աղջիկներին ավելի ուշ էին լողացնում, որ պարկեշտ եւ ամաչկոտ լինեն, մյուռոնը երեսներին երկար մնա: Հետաքրքրական է, որ աղջիկներին չորս-հինգ, նաեւ յոթ օր[163] պահում էին մյուռոնի մեջ, իսկ տղաներին՝ երեք օր[164]: Ազատ պահվածքի աղջկա համար ասվում է, որ այնքան է համբուրվել՝ «երեսի մեռոնը լուծվել, գնացել է»[165]: Պատահական չէ, որ հայերենի տարբեր բարբառներում «անմեռոն» բառը նշանակում է «անամոթ»: Եվ հակառակը, անչափ համեստ եւ ամոթխած

---

156 **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 94-95:

157 «Պատմութիւն **Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ»,** Թիֆլիս, 1912, էջ 16-17:

158 Տես **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, թ. 633, էջ 235:

159 Տես **Ե. Շահազիզ,** Նոր-Նախիջեւանը եւ Նոր-նախիջեւանցիք, ԱՀ, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 32:

160 Տես **Ե. Լալայեան,** Վասպուրական, ԱՀ, գիրք XX, էջ 175-176:

161 Տես ՀԱԲ, հ. 8, Արճակ, Ս. Ավագյան (Սերինե), էջ 73:

162 Տես **Ե. Լալայեան,** Վասպուրական, ԱՀ, գիրք XX, էջ 176. **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, ԱՀ, գիրք XVI, էջ 40:

163 Տես **Վ. Դեւրիկյան,** Սրբալույս մյուռոնի ժողովրդական պաշտամունքը. «Սրբալույս մյուռոն», Ս. Էջմիածին, 2001, էջ 51:

164 Տես **Ե. Լալայեան,** Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք XXVI, էջ 181:

165 **Վ. Դեւրիկյան,** նշվ. աշխ., էջ 51:

մարդու համար ասում են, որ «երեսից մեռոն է կաթում»[166]*, կամ՝ «բերնի մեջ մեռոն կեփի»*[167]*: Նոր Բայազետում մինչեւ մյուռոնից հանելը երեխային չէին լողացնում եւ նույն շորի մեջ էին պահում, «որպէսզի մեռոնը քաշայ ջան, ցած չգայ, թէ չէ անմեռոն (անպատկառ) կը լինի»*[168]*: Վասպուրականից գրառված «Ջիբրաել-Խըդըր Նաբին» հեքիաթում*[169] *տղան ու աղջիկն այնքան են համբուրվում, «որ էլ մեռոն չի մնա իրիսներ»*[170]*:*

Չմկրտված երեխաներին թաղում էին գերեզմանոցից յոթ քայլ հեռու[171] *եւ առանց արարողության*[172]*, որեւէ աղոթք չէր արվում եւ անգամ գաղտնի էր կատարվում թաղումը*[173]*: Ղարադաղում անկնունք մահացած երեխային արգելված էր եկեղեցական օրենքով թաղել համայնքի գերեզմանոցում*[174]*, քանի որ նա համարվում էր «հարամ, ոչ հայ»: Նման դեպքերից խուսափելու համար ծնողները շտապում էին հիվանդ երեխաներին «մեռոնաջրել»*[175]*:*

Ազգագրագետ Ռ. Նահապետյանի հաղորդմամբ՝ անկնունք մահացած երեխայի ծնողները բարեգործություն էին անում, որպեսզի երեխան դժոխք չընկներ[176]*: Նույնիսկ մարդիկ որոշակի քայլեր էին ձեռնարկում, որպեսզի երեխան կնքված համարվեր*[177]*: Վասպուրականում խաչ էին օծել տալիս քահանային, բոլոր տանեցիները համբուրում էին այն, դնում մեռած երեխայի կրծքին, պատանքում, հանձնում ժամկոչին, որ տանի եւ գերեզմանատանը թաղի*[178]*: Մեռած ծնված երեխայի համար ծնողները խաչ էին օրհնել տալիս, բամբակի մեջ երեք օր պահում, հետո տանում եկեղեցի, կախում մի սրբապատկերից, իբրեւ երեխային նվիրել էին այդ սրբին: Երեխայի դիակը, դեմքը դեպի արեւելք, տատմայրը թաղում էր*

---

166 **Պ. Բեդիրյան,** նշվ. աշխ., էջ 943:

167 Անդ:

168 **Ե. Լալայեան,** Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, ԱՀ, գիրք XVI, էջ 40:

169 Տես ՀԺՀ, հ. XIV, Վան-Վասպուրական, թ. 1, Երեւան, 1999, էջ 13-39:

170 Անդ, էջ 29:

171 Տես **Ռ. Նահապետյան,** նշվ. աշխ., էջ 99:

172 Տես ՀԱԲ, հ. 10, Ղզլար, **Գ. Գեւորգյան,** էջ 52-53:

173 Տես **Վ. Պետոյան,** նշվ. աշխ., էջ 276:

174 Սլավոնական մշակույթում եւս չմկրտվածներն արժանանում էին գերեզմանից դուրս թաղվելու (տես **Г. Кабакова,** Дети некрещеные. «Славянские древности», этнолингвистический словарь, т. 2, с. 86):

175 Տես **Հ. Հովսեփյան,** Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, էջ 341:

176 Տես **Ռ. Նահապետյան,** նշվ. աշխ., էջ 100. **Գ. Հակոբյան,** Ներքին Բասենի ազգագրությունը եւ բանահյուսությունը, Երեւան, 1974, էջ 193:

177 Սլավոնները, օրինակ, գերեզմանում դնում էին մոմ, խաչ (տես Г. Кабакова, Дети некрещеные, «Славянские древности», с. 86):

178 Տես **Ե. Լալայեան,** Վասպուրական, ԱՀ, գիրք XX, էջ 177:

այգում[179]: Մուշում քահանային դրամ էին տալիս, նա եկեղեցու պատին՝ ներսի կողմից, խաչ էր կերտում եւ օծում կամ մի պղնձյա խաչ օծում էր, Ավետարանին կամ սրբապատկերներին կապում կամ էլ դնում մկրտության ավազանի պատուհանին՝ այդպիսով ցանկանալով ասել, որ երեխան նվիրված է եկեղեցուն կամ որեւէ սրբի[180]: Եթե մերձիմահ երեխան մահանար կնունքի պահին, նա եւ նրա ծնողները կարժանանային դրախտի[181]:

Այսպիսով՝ բանահյուսական եւ ազգագրական օրինակներից երեւում է, որ հայկական միջավայրերում մկրտությանը մեծ կարեւորություն էր տրվում: Այն երեխայի հետծննդյան քառասնօրյա անցումային շրջանի անբաժան մասն էր: Մկրտությունն ու մյուռոնն ունեին փրկագործ, մեղսաքավիչ, նվիրագործող, դիվահալած եւ ապաքինող նշանակություն: Լվացվելով մկրտության ավազանի ջրում՝ նորածին երեխան երկրորդ անգամ ծնվում էր նոր կարգավիճակով: Նրան միաժամանակ նաեւ անվանադրում էին, որով նա ե՛ւ դառնում էր հասարակության լիիրավ անդամ, ե՛ւ զանազանվում իբրեւ անհատ:

РЕЗЮМЕ

Данная статья посвящена ритуалу крещения армян, во время которой отображались разные народные традиции и верования. Крещение составляло неразрывную часть послеродового сорокодневного срока. Обычно армяне крестили своих детей на восьмой (третий) день после рождения, в церкви или дома, в зависимости от обстоятельств (болезнь, траур, отсутствие или расстояние церкви). Крещение и миро имели спасительное, искупительное, инициационное, экзорцистическое и исцеляющее значение. Умываясь в купеле крещения, ребенок перерождался новым статусом. Еще во время крещения младенец получал имя, по которому он/она становился/лась членом общества и отделялся/лась как индивидум.

---

[179] Տես անդ:
[180] Տես **Ե. Լալայեան,** Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք XXVI, էջ 181:
[181] Տես **Ռ. Նահապետյան,** նշն. Աշխ., էջ 100:

SUMMARY

This article is devoted to the ritual of the Baptism among Armenians, during which various traditions and beliefs of Armenians were expressed. The Baptism is the inseparable part of forty-day period after childbirth. The Armenians usually baptize their children on the eighth (third) day after the birth in the church or at home, dependent on circumstances (illnesses, mourning, absence and distance of the church). The Baptism and chrism had a life-saving, initiation, medicinal significance and gave absolution. Being washing in the font, the new-born came to life for the second time and with the new status. During Baptism the child was named and through which he/she became the member of the society to be distinguished as a person.